

**Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(26 դեկտեմբերի 2004 թ.)

*«Ազնիւ ծառու եւ բարի, զի ի փոքրու հասսարին եղեր, լիշիր իշխանութիւն ունել ի վերայ լուսն բառաքի»:*

(Դուկ. ԺԹ 17)

Ամավերջի այս կիրակին, որ դեպի Քրիստոսի հայրնություն գրանող ճանապարհի վրա մի խորհրդավոր հանգրվան է, ևս մեկ անգամ մեզ թելազրում է լրջորեն անդրադառնալ մեր ապրած կյանքին, ներկային և մանավանդ ապագա հույսերին: Երբեմն այնպես է թվում, որ ժամանակի առաջասլաց ընթացքը շարունակվում է դեպի անցավորություն, ամեն բան փոխվում է իր բնական ընթացքի մեջ, ոմանք ծնվում են, ոմանք հեռանում այս աշխարհից, այս նոյն աշխարհում ոմանք բարձրանում, որիշներ խմբարկվում, ոմանք փորձում են գեւնել այն, ինչ արդեն չկա, կամ այն, ինչ դեռ պիտի լինի, նոր շինություններ, նոր դեպքեր, նոր դեմքեր մեր անձնական և ընկերային կյանքում: Իսկ շաբերի համար՝ նոյն սովորական կրկնությունը, որ դառնում է դեպի դադարկություն: Այլ խոսքով՝ ամենայն ինչ անցավոր է և անիմասդ: «Ունայնություն ունայնությանց»: Ինչ օգուպ ունի մարդն իր ողջ չարչարանքից, որ դանցվում է արեգակի ներքո,- ասաց իմաստուն Ժողովողը:

Մեր Տիրոց հետ հաղորդության այս խորհրդական պահին եկեք միասնաբար լսենք մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի՝ Դուկա ավելարանչի շուրթերով պարմած առակը, որի միջոցով Տերը նոր իմաստը է ներշնչում և նոր դեմքերով առաջնորդում մեզ բոլորին՝ կյանքը, քրիստոնեական հասկացողություններն ու ընկալումները վերարժեվորելու մեր ջանքերի ընթացքին:

Մի ազնվական մարդ հեռու երկիր է զնում թագավորական իշխանություն սրբանալու, և մեկնելուց առաջ իր ծառաներին շահեցնելու համար դրամ է դրախտ, և երբ վերադառնում է, կանչում է ու հաշիվ պահանջում:

Առաջինը մեկի դիմաց դասը շահած է ներկայանում, և դերն ասում է. «Կեցցես, բարի ծառա, քանի որ այդ փոքր բանի մեջ հավաքարիմ եղար, քեզ դասը քաղաքների վրա կառավարիչ եմ նշանակում»:

Երկրորդը ներկայանում է՝ մեկի դիմաց հինգը շահած, և հինգ քաղաքների վրա կառավարելու իշխանություն սրբանում: Գալիս է երրորդը և ասում. «Տեր, ահա քո դպաված դրամը, այն պահել էի մի թաշկինակի մեջ ծրարած: Վախենում էի քեզանից, որովհետք խիստ մարդ ես, վերցնում ես, ինչ քոնք չէ, և հենձում, ինչ որ չես սերմանեկ»: Տերը նրան ասաց. «Զար ծառա, քո խոսքով եմ դադելու քեզ»: ... Եվ սպասավորներին ասաց. «Վերցրեք սրանից դրամը և դարեք, նրան դպաված, ով դասնապարիկն է շահել», և շարունակում է. «Իմա-

ցեր, ունեցողին ավելիով պիրի պրվի. իսկ չունեցողից պիրի վերցվի իր ունեցած ամենացը, փոքր բաժինն է»:

Ահավասիկ մի իրավիճակ, որտեղ Շխուս Շռոմից իշխանություն սրացածների և ասպահային օրենքների հեղինակությամբ հապարփացող կրոնականների ներկայությամբ զուգահեռում է երկրավոր և երկնային թագավորությունները:

Փաստորեն, ևս մեկ ավնարկություն, որ փինդրված իր թագավորությունն այս աշխարհից չէ, իր առաքելությունն է երկրի վրա հասպաքել հոգնոր թագավորություն, որն Ինքը սրբազնություն է իր փրկագործ արյամբ և որը, փինքերական լինելով, սիրո և նորայրության հրամայականով է զմբեթված ու այդ ներդաշնակ միասնությունն ածում և դառնում է Տիրոջ սեփական Ս. Տաճար (Եփիս. Ձ 21): Ահավասիկ նյութի և հոգնորի հանդիպաղիր դարձելությունը:

Հոգնոր թագավորությունը, որ թեև սահմանափակ իր դժված մնասներով, բայց և այնպես մեզ լիացնում է առավ իր քանքարներով սեր, խոնարհություն, լավագիտություն, խոհեմություն, հենազանդություն, համբորագարություն, զոհողություն, նվիրաբերություն և հավիտենություն, որը ոչինչ չի մնանում կամ կորչում, այլ ամեն բան հարություն է առնում, զարթում ու շնչավորվում:

Սիրելի հավագակից եղբայրներ և քույրեր, այսօր մեր հաշվերվության կիրակին է, անցյալ դրաներկու ամիսների՝ մեզ դրված, արդյունավորած և շահած քանքարների դադարանը: Ընթացիկ դրավա առաջին ժամերին, երբ միասին այսդեղ աղոթքի էինք կանգնած քրիստոսարաշխման այս սեղանի շուրջ, նկարնեցինք, որ մեր կյանքի ընթացքը բաժանված է ժամանակային հարվածներ՝ դիմելու նպարակով, և միացանք Դողոս առաջալին, ով Գաղափացիներին ուղղված իր թղթի վեցերորդ զիստում ատում է: «Քանի դեռ ժամանակ կա, բարին գործենք բոլորի հանդեպ, մանավանդ հավաքի մեջ մեր հարազարդների հանդեպ» (Գալ. Ձ 10):

Վյոօր, այս հաշվերվության պահին, որքանո՞վ ենք արծագանքել Տիրոջ թագավորության իրավերին, մնասներն ուր էին և կիմա ուր են, որքանո՞վ շահեցինք մեր շնորհները, որքանո՞վ մնանակից եղանք Ասպծո երկրավոր թագավորության հաստատման ընթացքին, որքանո՞վ ազնվացանք և սրբվեցինք մեր սայթաքումներից և, ի վերջո, որքանո՞վ փրկության դնորինությունն իրագործող եղանք: Վյո նյութական երևելին, որ ժամանակի մեջ է միրնում, երկրային թագավորինն է, սակայն «... հոգին է կենդանարար», - ասում է Քրիստոս, և սա հավիտենական բաժինն է երկնավոր թագավորի, որը մշտնջենապես մեզ հաղթանակի է առաջնորդում:

Եվ ահա լսեցեք Ժողովոյի խոսքերի վերջաբանը. «Ասպծոց վախեցեք և նրա պարվիրանները պահեցեք, ... որովհեք Ասպծած բոլոր արարածներին պիրի դափառարանի բերի նրանց կարարած բոլոր թաքուն գործերի համար՝ լինեն դրանք բարի, թե չար» (Ժող. Ժ 14):

Բայց բյուր երանի մեզ բոլորին, երբ դարաստանի այդ օրը մեր Տեր Շխուս Քրիստոս, իր խոսքը մեզ ուղղելով, ասի: «Կեցցես, բարի ծառա և հավաքարիմ, քանի որ այդ փոքր բանի մեջ հավաքարիմ եղաք, քեզ դասը քաղաքների վրա կառավարիչ եմ նշանակում»:

**Ընորհը սէր, իսաղալութիւն և ներկայութիւն մշտամնայ Տեսոն Աստուծոյ և Փրկչին մէրոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ի կեսան ձեր, այժմ և յափունան յափունայց, ամէն:**